

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-25/9**

ք. Երևան

«24» 02 2025թ.

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Աշոտ Վարդանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Ամիրջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 67,577,328 (վաթսույնյոթ միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր քսանութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

Ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


7.15 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ միջուկային անվտանգության  
կարգավորման կոմիտե  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
ՀՀ ՖՆ գործառն վարչ.  
ՀՀ 900011040020  
ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար  
Ա.Վարդանյան



(ստորագրություն) Կ.Տ.



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն  
անվտանգության գիտատեխնիկական  
կենտրոն» ՓԲԸ  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
Ինտերբանկ  
ՀՀ 2052022100061001  
ՀՎՀՀ 02558849

Տնօրեն  
Ա.Ամիրջանյան



(ստորագրություն) Կ.Տ.



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	50531140-1	ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կարիքների համար փորձաքննության ծառայության (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման մանրամասն տեխնիկական բնութագիրը բերված է հավելված 1.1-ում Փորձաքննության ծառայությունների մատուցման համար պահանջվում է լիցենզիա. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծման և այլ փաստաթղթերի փորձաքննության ԼԻՑԵՆԶԻԱ	դրամ	67577328	1	Ք.Երևան Տիգրան Մեծի 4	25.12.2025


\* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

\*\* Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են համաձայն Պատվիրատուի կողմից առաջարկված պատվեր - առաջադրանքների:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 ՀՀ ՖՆ գործառն վարչ.  
 ՀՀ 900011040020  
 ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար  
 Ա.Վարդանյան




(ստորագրություն)



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 Ինտերբանկ  
 ՀՀ 2052022100061001  
 ՀՎՀՀ 02558849

Տսորեն  
 Ա.Ամիրջանյան



(ստորագրություն)

Կ.Տ.



## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2025 թվականին ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման

### 1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննություն

1.1 Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության գնահատում, տեխնիկական որոշումների, կարգավորող փաստաթղթերի նախագծերի, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վրանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի, սեյսմիկ անվտանգության վերազնահատման ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերի և միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի գնահատում և փորձաքննություն:

- Ներկայացված տեխնիկական որոշումների, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի և ծրագրերի, միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերվող այլ փաստաթղթերի ամբողջականության ստուգում:
- Անվտանգության պահանջների և չափորոշիչների համապատասխանության ստուգում (անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգողական հաշվարկներ):
- Ներկայացված անվտանգության հիմնավորումների և հաշվարկների, նախագծային լուծումների ստուգման համար սեփական մաթեմատիկական մոդելի ձևափոխում և վերլուծությունների կատարում (անհրաժեշտության դեպքում):
- Փորձագիտական եզրակացության մշակում:

1.2 ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ զոդու 37-րդ բեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ զոդու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն: Ակտիվ զոդու ու միջուկային վառելիքի հեղ աշխատանքների անվտանգության հիմնավորման գնահատում:

- Ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության ստուգում:
- Ներկայացված հաշվարկների ստուգման համար Կենտրոնի կողմից PARCS-RELAP և PARCS-PATHS ծրագրերով մշակված ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ակտիվ զոդու մաթեմատիկական մոդելի ձևափոխում:
- Ստուգողական հաշվարկների և փորձագիտական գնահատականների կատարում:
- Ներկայացված անվտանգության հիմնավորումների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական գնահատականների կատարում:
- Եզրակացության մշակում:

### 2. ՀՀ ՄԱԿԿ-ի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ

2.1 ՀԱԷԿ ջերմահիդրավիկ մոդելի մշակում TRACE ծրագրով՝ հաշվի առնելով ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության համակարգերի մոդիֆիկացիան:

- RELAP ծրագրով մշակված ՀԱԷԿ-ի ջերմահիդրավիկ մոդելի փոխակերպում TRACE-ի մոդելի:
- Ընտրված վթարների համար համեմատական վերլուծության իրականացում ՀԱԷԿ-ի RELAP և TRACE մոդելներով:
- Հաշվետվության մշակում:

2.2 ՀԱԷԿ-ի աշխատած վառելիքի պահման ուղղահայաց կանխարների կրիտիկության հաշվարկ՝ հաշվի առնելով ՀԱԷԿ-ի աշխատած վառելիքի պարամետրերը:

- Կանխսորի տվյալների հավաքագրում:
- Կանխսորի և վառելիքի մոդելի մշակում MCNP ծրագրով:
- Կրիտիկության հաշվարկ տարբեր բեռնվածքների համար:
- Հաշվետվության մշակում:

2.3 ՀԱԷԿ-ի անվտանգության գնահատման օպերատիվ խնդիրների լուծման նպատակով SAPHIRE ծրագրային միջավայրում մշակված ԱԿԿ-1 անկախ մոդելի ֆունկցիոնալության ընդլայնում:

- ԱԷՄԳ TECDOC 1804 փաստաթղթում նկարագրված՝ ԱՎՎ-1 արդյունքների գործնական կիրառման հնարավորությունների դիտարկում պատահարների, պայմանների գնահատման (Events and Conditions Assessment - ECA) և տեսչական ստուգումներում արձանագրված խախտումների կարևորության գնահատման (Significance Determination Process - SDP) ներկառուցված հարթակների օգտագործմամբ:
- ECA հարթակի տվյալների հենքի ստեղծում, հարթակի կարգաբերում և նախապատրաստում ՀԱԷԿ-ի անվտանգության գնահատման օպերատիվ խնդիրների լուծման նպատակով կիրառություններին:
- SDP հարթակի տվյալների հենքի ստեղծում, կարգաբերում և նախապատրաստում ՀԱԷԿ-ի անվտանգության գնահատման օպերատիվ խնդիրների լուծման նպատակով կիրառություններին:
- SAPHIRE ծրագրային միջավայրում պատահարների, կոնֆիգուրացիաների և խախտումների կարևորության գնահատման ուղեցույցի մշակում:

**2.4 «Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիտորինգի պահանջներ/ընթացակարգ» փաստաթղթի նախագծի մշակում:**

- Միջազգային փորձի ուսումնասիրում:
- Փաստաթղթի կառուցվածքի մշակում և համաձայնեցում ՀՀ ՄԱԿԿ հետ:
- Փաստաթղթի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ:
- Դիտողությունների առկայության պարագայում՝ նախագծի վերամշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ:

**2.5 ՀՀ-ում միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման բնագավառում առկա իրավիճակի գնահատում և բնագավառի լավարկման վերաբերյալ առաջարկների մշակում:**

- Միջազգային փորձի ուսումնասիրում:
- Համեմատական վերլուծություն ՀՀ և միջազգային փաստաթղթերի պահանջների հետ:
- Հիմք ընդունելով վերլուծության արդյունքները՝ բնագավառի լավարկման վերաբերյալ առաջարկների մշակում, ներառյալ գործող իրավական ակտերում՝ ՀՀ կառավարության 24.12.2001թ. թիվ 1263, 13.07.2002թ. թիվ 931-Ն, 25.12.2004թ. թիվ 1791-Ն որոշումներ, փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ:

**2.6 «Ռադիոակտիվ թափոնների պետական գրանցման կարգը» նախագծի լրամշակում և վերջնական տեսքի բերում:**

- «Ռադիոակտիվ թափոնների պետական գրանցման կարգը» նախագծի լրամշակում՝ հիմք ընդունելով միջազգային փորձը, ինչպես նաև ՀՀ ՄԱԿԿ-ի հետ քննարկումների արդյունքները/առաջարկները,
- «Ռադիոակտիվ թափոնների պետական գրանցման կարգը» նախագծի վերջնական տեսքի բերում՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև «Ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման պահանջներ» նախագծում:

**2.7 ԱԷՄԳ TOSCA (Technical and Scientific Support Organizations Self Capability Assessment) մեթոդաբանության կիրառմամբ իրականացված կենտրոնի կողմից ՀՀ ՄԱԿԿ-ին մատուցվող ծառայությունների ինքնագնահատման արդյունքների ամփոփում և գործողությունների պլանի իրականացում:**

- ԱԷՄԳ TOSCA մեթոդաբանության կիրառմամբ իրականացված կենտրոնի ինքնագնահատման արդյունքների ամփոփում՝ ներառյալ գործողությունների պլանի մշակում, դրանց համաձայնեցում ՀՀ ՄԱԿԿ-ի և ԱԷՄԳ-ի հետ:
- Ինքնագնահատման հաշվետվության ամփոփում և ներկայացում ԱԷՄԳ և ՀՀ ՄԱԿԿ (անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ կառավարություն):
- ՀՀ ՄԱԿԿ-ի գործունեությանը վերաբերող և ՀՀ ՄԱԿԿ-ի աջակցությամբ իրականացվելիք աշխատանքների առանձնացում, ՀՀ ՄԱԿԿ-ի գործողությունների ծրագրի մշակում:
- ԱԷՄԳ աջակցությամբ իրականացվելիք աշխատանքների առանձնացում, դրանց ներառում ազգային և այլ աջակցության ծրագրերում:
- Գործողությունների պլանով սահմանված աշխատանքների իրականացում ըստ ժամանակացույցի:
- Գործողությունների պլանով սահմանված աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ պարբերական զեկուցում ՀՀ ՄԱԿԿ-ին և ԱԷՄԳ գիտատեխնիկական աջակցություն տրամադրող կազմակերպությունների ֆորումին:

**3. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության հսկողության գործընթացին աջակցող աշխատանքներ**

**3.1 Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության համապատասխան մասերի մշակում:**

- Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության կենտրոնին հանձնարարված գլուխների մշակում:
- Մասնակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից կազմակերպված քննարկումներին:
- Քննարկումների արդյունքում ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից տրված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա ազգային հաշվետվության համապատասխան մասերի լրամշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ (ըստ անհրաժեշտության):

**3.2 «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համադրել կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության վերաբերյալ միջազգային փորձագիտական հանրության կողմից տրված հարցերի պատասխանների մշակում:**

- Համատեղ կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության վերաբերյալ կոնվենցիայի մասնակից երկրների կողմից տրված հարցերի պատասխանների մշակում՝ կենտրոնի իրավասությունների շրջանակում:

- Մասնակցություն ՀՀ ՄԱԿ-ի կողմից կազմակերպված քննարկումներին:
- Քննարկումների արդյունքում ՀՀ ՄԱԿ-ի կողմից տրված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կենտրոնի պատասխանների լրամշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿ (ըստ անհրաժեշտության):

**3.3 Տեխնիկական աջակցություն ՀՀ ՄԱԿ-ի կողմից իրականացվող ստուգումներին և լիցենզավորման, ներառյալ թույլտվությունների տրամադրման գործունեությանը:**

- Աջակցություն տարեկան պլանի համաձայն ՀՀ ՄԱԿ-ի կողմից իրականացվող ստուգումներին, ներառյալ ճառագայթային մոնիտորինգի իրականացում, այդ թվում՝ իոնացնող ճառագայթման աղբյուրներ օգտագործող օբյեկտներում, հանքավայրերում և ռադիոակտիվ նյութերի փոխադրման ժամանակ, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:
- ՀԱԷԿ-ի ընտրված անձնակազմի անհատական ճառագայթային մոնիտորինգի իրականացում՝ 3-12 ամիսների ընթացքում:
- Կարգավորող հսկողությունից դուրս գտնվող ռադիոակտիվ աղբյուրների, ռադիոնուկլիդներով աղտոտված տարածքների և իրերի հայտնաբերման դեպքում ռադիոմետրիկ, սպեկտրոմետրիկ և դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:
- Լիցենզավորված անձանց կողմից ՀՀ ՄԱԿ ներկայացված ճառագայթային անվտանգության ապահովման (ՀԱԷԿ, ՌԱԴՌՆ, ԱՄՎՁՊ) վերաբերյալ փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից մաքսային ստուգման կետերում ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման վերաբերյալ ՀՀ ՄԱԿ ներկայացված փաստաթղթերի՝ հաղորդագրությունների, չափման հաշվետվությունների, բժշկական տեղեկանքների և այլ տեղեկությունների, դիտարկում և եզրակացությունների նախագծի պատրաստում:
- Միջուկային և ռադիոակտիվ նյութերի, գեներացնող ճառագայթման աղբյուրների հետ գործունեության լիցենզավորման առընչվող փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:
- ՀՀ ՄԱԿ-ի անձնակազմի արտաքին ճառագայթահարման դոզաների հսկողություն՝ անհատական դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:
- ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված ճառագայթային անվտանգության և ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ հաշվետվությունների դիտարկում (ըստ ներկայացման) և դիտարկման հաշվետվության պատրաստում:
- Մասնակցություն ՀՀ ՄԱԿ-ի ֆիզիկական անձանց որակավորման ստուգում անցկացնելու նպատակով ստեղծված հանձնաժողովների աշխատանքներին:

**3.4 ՀՀ ՄԱԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի, համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի, վեբ-կայքի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում տարվա ընթացքում:**

- ՀՀ ՄԱԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի՝ xARIS, տեխնիկական սպասարկում և կատարելագործում (ըստ անհրաժեշտության), աջակցություն գործարկման և օգտագործման ընթացքում:
- Համակարգչային ցանցի, ներառյալ վիրտուալ սերվերների, արտաքին հոստինգի, ներքին հեռախոսային ցանցի, տեսախցիկների համակարգի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում տարվա ընթացքում:
- ՀՀ ՄԱԿ-ի նոր կայքի տեխնիկական սպասարկում:

**3.5 Աջակցություն միջուկային տեղակայանքներում և ռադիոակտիվ աղբյուրների օգտագործման հետ կապված պատահարների վերաբերյալ հաշվետվությունների (IRS, INES) ներկայացման, ԱԷՄԳ-ի INIS, RASIMS, IRMIS տեղեկատվական համակարգերում մասնակցության, CBRN, INTERPOL կազմակերպությունների գործունեության հետ կապված ՀՀ ՄԱԿ-ի սրանձնած պարտականությունների կատարմանը, ինչպես նաև ԱԷՄԳ-ի տարածաշրջանային RER ծրագրերում՝ որպես կոնտրակտային անձ (քոնթրեֆարթ) հանդես գալու հետ կապված պարտականությունների կատարում:**

- IRS համակարգին ներկայացնելու համար ՀԱԷԿ-ում տեղի ունեցած պատահարների մասին տեղեկությունների հավաքում և գնահատում:
- IRS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:
- ԱԷՄԳ-ի IRS և INES համակարգերի տվյալների բազայում առկա միջուկային տեղակայանքներում տեղի ունեցած պատահարների տեղեկատվության վերլուծություն, միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀԱԷԿ-ի անվտանգության տեսակետից կարևոր պատահարների վերաբերյալ ՀՀ ՄԱԿ-ին տեղեկատվության տրամադրում:
- INIS համակարգին ներկայացնելու համար ՀՀ գիտական ամսագրերում տպագրված և INIS-ի թեմատիկային վերաբերվող հոդվածների մասին տեղեկությունների հավաքում:
- INIS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:
- RASIMS և IRMIS համակարգեր մուտքագրելու համար տվյալների պատրաստում և մուտքագրում:
- ԱԷՄԳ տարածաշրջանային RER ծրագրերի վարում:

**3.6 Աջակցություն ՀՀ ՄԱԿ-ի վթարային կենտրոնի աշխատանքներին:**

- Վթարային կենտրոնի աշխատանքի կազմակերպման շարունակական բարելավում և արդիականացում:
- Մասնակցություն ՀՀ ՄԱԿ-ի վթարային կենտրոնի վարժանքների և քաղաքացիական պաշտպանության վարժանքների կազմակերպմանը և անցկացմանը, արդյունքների գնահատում:

**4. Նոր մասնագետների պատրաստում ՀՀ ՄԱԿ-ի համար**

- 4.1 ՀՀ ՄԱԿ-ի համար նոր մասնագետների պատրաստման աշխատանքներ (1 պատրաստվող մասնագետ):**
- Մասնագետի պատրաստման ծրագրի մշակում/վերամշակում:


- Մասնագետի պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակում/վերամշակում:
- Նոր պատրաստվող մասնագետի համար դասընթացների փուլերի կազմակերպում և անցկացում:
- Նոր պատրաստվող մասնագետի գիտելիքների պարբերական ստուգում:

**5. Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիտորինգ**

- 5.1 Վաղ ահազանգման ռադիացիոն մոնիտորինգի համակարգի (EWRMS - Early Warning Radiation Monitoring System) շահագործում և սպասարկում:
- Թվով 32 ստացիոնար ռադիացիոն մոնիտորինգի կայանների և թվով 2 շարժական սպեկտրոմետրիկ կայանների պարբերական սպասարկման աշխատանքների կազմակերպում և իրականացում, համակարգի աշխատունակության և ֆիզիկական ամբողջականության ապահովում:
  - Հաշվետվության մշակում:
- 5.2 Շինանյութի ճառագայթային մոնիտորինգ:
- Տարբեր շինանյութերում ռադիոիզոտոպների պարունակության չափումներ (տարբեր գույների տուֆ, մարմար/մարմարի փոշի, բազալտ/բազալտի փոշի, պերլիտ, պեմզա, գրանիտ/գրանիտի փոշի, տարբեր տեսակի ավազներ, ցեմենտ, գաջ, գիպս/գիպսոնիտ և այլ)՝ ընդամենը 20 չափում:
  - Հաշվետվության մշակում:
- 5.3 Օդի ճառագայթային մոնիտորինգ:
- Օդի ճառագայթային մոնիտորինգի իրականացում: Մոնիտորինգի արդյունքների վերլուծություն, արդյունքների ներկայացման ձևի մշակում:
  - Հաշվետվության մշակում:
- 5.4 Որոշումների կայացմանն աջակցող JRODOS համակարգի շահագործում և սպասարկում:
- Վթարային արտանետումների սցենարների մշակում, վթարների պատճառով ճառագայթային հետևանքների գնահատում:
  - Հաշվետվության մշակում:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**  
 ՀՀ միջուկային անվտանգության  
 կարգավորման կոմիտե  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 ՀՀ ՖՆ գործառն վարչ.  
 ՀՀ 900011040020  
 ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար  
 Ա.Վարդանյան



(ստորագրություն) Կ.Տ.



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
 «Միջուկային և ռադիացիոն  
 անվտանգության գիտատեխնիկական  
 կենտրոն» ՓԲԸ  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 Ինտերբանկ  
 ՀՀ 2052022100061001  
 ՀՎՀՀ 02558849

Տնօրեն  
 Ա.Ամիրջանյան



(ստորագրություն) Կ.Տ.



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«Որամ»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության											Ընդամենը		
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր		
1	50531140/1	Փորձաքննության ծառայություն	-	-	13515465	30409797	30409797	30409797	47304130	47304130	47304130	67577328	67577328	67577328	67577328	

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

«Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե»  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 ՀՀ ՖՆ գործառն վարչ.  
 ՀՀ 900011040020  
 ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար  
 Ա.Վարդանյան

  
 (ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 Ինելկոբանկ  
 ՀՀ 2052022100061001  
 ՀՎՀՀ 02558849

Տնօրեն  
 Ա.Ամիրջանյան

  
 (ստորագրություն) Կ.Տ.

Պայմանագրի կողմ

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

\_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N    հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն